

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2019/1

Ինտերնետ Կառավարման Հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված  
Գուգլ, մասնավորապես՝ ՅուԹյուբ, Գուգլ քարտեզներ, Գուգլ թրենդս և այլ  
լուծումները Հայաստանում ամբողջապես հասանելի և կիրառելի դարձնելու  
հնարավորությունները ապահովող մասնագիտական խմբի նիստի

ք. Երևան

15 մարտի 2019թ

Մասնակցել են.

Գեղամ Վարդանյան, ՀՀ ՏԿՏՏ նախարարի տեղակալ

Արման Գալստյան, ՀՀ ՏԿՏՏ նախարարության ՏՏ վարչության պետ

Գրիգորի Սադյան, Ինտերնետ Կառավարման հանձնաժողովի քարտուղար

Միքայել Պողոսյան, բլոգեր

Բենիամին Թադևոսյան, Payx ՄՊԸ հիմնադիր

Մամվել Բեկթաշյան, Betanet ՄՊԸ

Նորայր Արզումանյան, բլոգեր

Մամվել Մարտիրոսյան, Ինտերնետ անվտանգության փորձագետ

Արուսյակ Հակոբյան, Media Group գործակալություն

Արմինե Մարուքյան, Media group գործակալություն

Վահան Հովսեփյան, RIPE NCC Արտաքին հարաբերությունների տնօրեն, Կովկաս և Կենտրոնական Ասիա

Քննարկման թեմաների վերաբերյալ տեղեկանք ներկայացրեց Գրիգորի Սադյանը: Մասնավորապես նա նշեց, որ Google adsence ծրագիրը թույլ է տալիս գումար վաստակել բովանդակային գովազդի հիման վրա, հայերենով ստեղծված բովանդակությունը հնարավոր է ներառել այդ ծրագրում և գումարներ ստանալ բովանդակային գովազդից: Վճարման եղանակը՝ հեռագրային փոխանցում 100 ԱՄՆ դոլարից ավել գումար հավաքվելուց հետո: Նույն ծրագիրը գործում է Youtube-ում, սակայն այս դեպքում ՀՀ-ն չի ընդգրկվում այդ ծրագրի մեջ: Այս դեպքում գումար փոխանցելու հարցը չի ծագում, քանի որ ՀՀ-ն չի մասնակցում այդ ծրագրում: Հարկ է նշել, որ Youtube ծրագրում ընդգրկված են 102 երկիր, այդ թվում՝ հարևան երկրները:

Ծրագրում ներառված երկրներում ծրագրի մասնակից դառնալու համար անհրաժեշտ է վիդեոկոնտենտ, որն ունի առնվազն 1000 բաժանորդ և դիտվել է ընդհանուր առմամբ 4000 ժամ վերջին 12 ամսվա ընթացքում: Հարկավոր է նկատի ունենալ, որ ոչ բոլոր վիդեոները կարող են

ներառվել ծրագրում. մասնավորապես չեն ներառվում պոռնկագրություն, ծայրահեղականություն այլ ապօրինի բովանդակություն պարունակող տեսահոլովակները, կան նաև որոշ տեխնիկական պահանջներ: Նշվեց նաև, որ տվյալ պահին մեզ առաջարկվում է միանալ Youtube-ի adsense ծրագրին միջնորդ կազմակերպության միջոցով, որը իրեն է վերցնում մեզ հասանելիք 55%-ի 30%-ը (Agency of Internet Rights (AIR), գրասենյակը գտնվում է Ուկրաինայում):

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ բարձրացված հարցերից բացի ՀՀ-ում կա գումարի փոխանցման խնդիր PayPal ծառայության կողմից: Հնարավոր է գումար վճարել PayPal համակարգի միջոցով, սակայն գումար ստանալը ՀՀ ռեզիդենտների համար հնարավոր չէ: Այս փաստը կարող է բացասական դեր ունենալ Youtube.am ծրագրում Հայաստանի ներգրավման համար: Վրաստնաում այդ հնարավորությունը առկա է, ինչպես նաև առկա է Youtube.ge վրացական համակարգը:

Քննարկման համար առաջարկվող հարցեր.

- Ինչպես ՀՀ-ն դարձնել «Youtube Partner Program»-ին մասնակից
- Ինչպես ապահովել PayPal-ի կողմից ՀՀ-ի ներառումը
- Ինչ կանոնների պետք է համապատասխանի վիդեոկոնտենտը, որպեսզի ներգրավվի ծրագրում

Քննարկումների ընթացքում իր պրեզենտացիան ներկայացրեց Միքայել Պողոսյանը (ներկայացվում է կից):

Սամվել Մարտիրոսյանը նշեց, որ Facebook-ը նախաձեռնում է նմանատեսակ ծառայություն մատուցել, ինչը կբերի մրցակցության: Նշվեց, որ օգտագործման տեսակետից երկու ինտերֆեյսները համարժեք են: Իսկ Հայաստանին չներգրավելու պատճառը, հնարավոր է, կայանում է նրանում, որ հայերեն բովանդակությունը Youtube մասնագետների/արհեստական բանականության կողմից հնարավոր չէ վերահսկել լավ չհասկանալու պատճառով: Ենթադրվեց, որ Վրաստանի դեպքում հնարավոր է, որ հատուկ անձնավորություն/խումբ գոյություն ունի, որը զբաղված է վրացերենի մոդերացիայով: Ենթադրություն հնչեց նաև, որ խնդրի պատճառը միգուցե նաև հայերեն բովանդակության նկատմամբ վստահություն բացակայությունն է:

Բենիամին Թադևոսյանի կարծիքով, Youtube-ին, հնարավոր է, չի հետաքրքրում հայալեզու բովանդակության շուկան՝ իր փոքրաբանականության պատճառով: Նպատակահարմար է պատկան մարմիններին դիմել PayPal-ին, ստանալ տեղեկանք ԿԲ-ից PayPal-ին միանալու պրոբլեմի մասին, հրավիրել PayPal-ի հարցով առանձին հանդիպում:

Վահան Հովսեփյանն առաջարկեց Գուգլ ղեկավարության հետ բանակցություններում նշել, որ կարելի է գալ դրական տեղաշարժի և հայտարարել դրա մասին գալիք WCIT 2019 հանդիպման ընթացքում:

Միքայել Պողոսյանն ավելացրեց, որ անկախ ամեն ինչից հարցադրումը նպատակահարմար է ձևակերպել՝ օգտագործելով հետևյալ իմաստակիր բառերը.

Add Armenia to Youtube location list  
Add Armenia to Youtube partner program

Մամվել Բեկթաշյանը նշեց, որ գոյություն ունի մի փակ շրջա. գովազդատուներ չկան վիդեոկոնտենտի սակավության պատճառով, իսկ վիդեոկոնտենտի սակավությունը առկա է գումարներ չստանալու հետևանքով: Նա նաև ավելացրեց, որ ճշգրիտ գովազդային շուկայի ծավալի գնահատականն այսօր անհնար է իրականացնել տեղեկատվության անհասանելիության պատճառով: Մեկ վիդեոբլոգերի կողմից այլ երկրներում գրանցվելու դեպքում ստացվող գումարային եկամուտը տատանվում է 300-3000 ԱՄՆ դոլարի չափով, տարբեր երկրներում հայկական վիդեոբլոգերների քանակը գնահատելը անհրատեսական է, կարող է գտնվել 1000-10000 մասնակիների տիրույթում, այն է. 0.3 – 30 մլն ԱՄՆ դոլար: Մամվել Բեկթաշյանը նշեց նաև, որ հայերեն UNICODE-ում Google-ը համարում է երկու սիմվոլ, ի տարբերություն այլ լեզուներով գրված տառերին:

Փորձագիտական խմբի առաջարկություններ.

Գուգլի հետ փոխկապակցված խնդիրների լուծման նպատակով ստեղծել փորձագիտական աշխատանքային խումբ, որի համակարգող նշանակել Մամվել Մարտիրոսյանին:

Խմբի կողմից ուսումնասիրվելիք հարցերը.

Հայերեն UNICODE-ի Google-ի կողմից կիրառման կարգը, հնարավոր բարելավումները

- Ինչպես ՀՀ-ն դարձնել Youtube Partner Program-ին մասնակից
- Ուսումնասիրել տվյալ խնդրի լուծման Վրաստանի փորձը
- Ներքին աղբյուրներից փորձել հստակեցնել ծրագրին մասնակցության պայմանները և Հայաստանի՝ ծրագրում ներգրավվելու խնդիրները
- Առաջարկել ԻԿՀ խնդրի լուծման համար անհրաժեշտ մասնավոր և պետական մարմինների կողմից գործակցության պայմանները՝ ներառյալ նամակագրություն, հանդիպումներ, WCIT շրջանակներում պայմանավորվածություններ

Մամվել Մարտիրոսյանին առաջարկել մինչև մարտի 23-ը կազմակերպել փորձագիտական խմբի հանդիպում:

Մասնագիտական խումբն առաջարկում է ստեղծել PayPal համակարգի ներդրման հարցերով փորձագիտական խումբ, որը կպատրաստի և կներկայացնի ՀՀ օգտվողների համար PayPal համակարգին միանալու համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը: Փորձագիտական խմբի ձևավորումը առաջարկվում է իրականացնել ԻԿՀ քարտուղարության կողմից՝ ներգրավելով պետական, մասնավոր, հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվող ներկայացուցիչներին:

ԻԿՀ քարտուղար

Գ. Սադյան